

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

ՄԵԾ ՏՕՆԸ ԳԱԽԱՌՆԵՐՈՒՄ

Ձ Է Բ Ր Ա Յ Ի Լ

(Կարեազինի գաւառ)

Համազգային Մեծ Տօնին Ձէրբայի-
լի հայերը անհաղորդակից մնացին,
չնայած որ կան բիշ թէ շատ ինտելի-
գենտ անհատներ: Եւ պատճառը շատ
պարզ է. Ձէրբայիլը կազմելով առևտրի
կենդրոն, բոլորովին չի հետաքրքրու-
մ կողմնակի հարցերով: Ի՞նչ բան է տա-
ռերի գիւտը տեղիս հայերի համար,
քանի որ նրանք կարողանում են ա-
ռանց հայոց լեզուի էլ վարել իրենց
գործերը, և բոլորովին ազգային գոր-
ծերով չեն հետաքրքրուում:

Կեզուն այնպէս է յետ մղւած, որ
Ձէրբայիլում գոյութիւն ունեցող պե-
տական տղայոց երկդասեան և օրիոր-
դաց միդասեան ուսումնարաններում
հայոց լեզուն չի աւանդուում և Ձէր-
բայիլցիք այդ մասին չեն էլ մտա-
ծում: Նրանց անտարբերութիւնը դէ-
պի հայոց լեզուն այն աստիճանի է
հասնում, որ նրանք բնաւ ձեռքները
չեն վերցնում հայ լրագիր: Շատերից
եմ լսել, որ ասում են. «ոուսերէն
պանհասնէէ չիտատ» (понятнѣе чи-
тать):

Փառանձէմ Շաղիան

Օ Ք Ր Ո Բ Ա Կ Ե Ր Տ

(Արդիւնի վիճակ)

Հոկտեմբերի 13-ին համազգային Մեծ
Տօնը տօնւեց այստեղ միայն անուսով
և ոչ թէ այնպէս, ինչպէս կարգն էր,
ինչպէս պարտական էր տօնել մի հայ
գիւղ, մի հասարակութիւն, որի ան-
դամների թիւը հասնում է 1300-ի:

Համաձայն Կաթողիկոսի հրամանի,
շարաթ օրը դպրոցում պարապմունք
չկար, և այդ օրը դպրոցում աշակեր-
տական հանդէս էր նշանակւած: Յայտ-
նւեցին ժողովրդին, որ շարաթ օրը
խանութները բաց չանեն ու ներկայ
գտնւին դպրոցի հանդէսին: Ոչ մի
խանութ չփակւեց. պատասխանում
էին. «Մենք այնքան հեռու ենք Կա-
թողիկոսից, որ նրա հրամանը մեզ
չի վերաբերում»:

Հանդէսը պիտի սկսէր ժամը 10-ին,
բայց մինչև ժամը 2-ը ոչ որ չեկաւ:
Ստիպւած եղանք հանդէսը յետաձգել
կիրակի օրւան, կարծելով թէ մի գու-
ցէ շատերը չեն լսել, կամ զբաղւած
լինելով գործերով՝ չեն կարողացել
գալ: Բայց արի ու տես, եկեղեցում
քարոզեցին մի ամբողջ ժամ, որ հան-
դէսին ներկայ լինեն, լսեն իրենց բա-
րերարներին արած գործը. ժամերգու-
թիւնից յետոյ զանգակները խփեցին

որ դպրոց հաւաքւեն, բայց էլի նոյն
տեսարանը, ինչ որ շարաթ օրն էր. —
դպրոցի դռանը կանգնած մնացին ու
նեքս չեկան. հանդէսին ներկայ էին
միայն մի քանի կին և մի քանի ե-
րիտասարդ:

Գիւղն ունի ծխական դպրոց (2 ու-
սուցչով), որը միւս տարի անկասկած
խապառ պիտի վերանայ մէջ տեղից,
որովհետև այս տարի ժողովրդի խնդ-
րանօք բացւեց պետական դպրոց (ո-
րին ժողովուրդը տարին 300 ռուբ. է
տալիս):

Ծխական դպրոցում ուսումն սկսւեց
սեպտեմբերի 15-ին, իսկ պետականում՝
հոկտ. 1-ին: Հայոց դպրոցում կար 70
աշակերտ, բայց հենց որ բացւեց նոր
դպրոցը, իսկոյն շատերը հանեցին
իրենց տղաներին և տարան այնտեղ:
Տարան ոչ թէ աղքատները, այլ հա-
րուստները:

Եւ մինչև օրս շարունակում են հա-
նել աշակերտներին և տանել մինիստ-
րական դպրոցը. իսկ եթէ պետական
դպրոցում չեն ընդունում այդպիսիներ-
ին, այդ դէպքում կոո ու բեզեառը
ընկնում է ծխականի գլխին. եթէ սա-
ղը չլինի, քոռը խօ կայ ու կայ, Դըպ-
րոցը տարեկան եկեղեցուց ստանում է
200 ռ., երիտասարդութիւնից 100 ռ.,
մնում է 400 ռ., այն էլ մի գիւղ, որ
200 տնից է բաղկացած, չի կարողա-
նում կամ չի ուզում տալ: 400 ռ. մի
մեծ փող չէ, բայց միայն ու միայն
այդ 400 ռ. բացակայութիւնն է, որ
սպառնում է ծխական դպրոցի փակ-
ման: Թող պետական դպրոցի կողքին
կանգնի ծխական ձրի դպրոցը, այն
ժամանակ միայն Օբրորակերտի 200
տուն բնաշուքիւնը կը բարեհաճէ ու-
ղարկել դպրոց իր երեխաներին:

Շ. Սիմէօնեան